

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՆԱՀՊԵՏ ԸՈՒՉԱՆՆ ԴԻՆԱՆԸ», քննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Արշակ Չօպանեան. Գարիգ, 1902, տպարան «Մեհարա»:

Այս հրատարակութիւնը գալիս է հաստատուելու արդէն յայտնի իրողութիւնը: Դա այն է, որ մեր հին գրականութիւնը ժողովրդական չէր: Մենք խօսում ենք այն գրականութեան մասին, որի համարեա միակ տէրը հոգևորականութիւնն էր: Այդ գրականութիւնը հոգևոր էր, եկեղեցական. նա գրաբար էր, մատչելի միայն եկեղեցական դասին և սակաւաթիւ ընտրեալներին, որոնք կարողանում էին սովորել այդ լեզուն: Կար ժողովրդի ահագին բազմութիւնը, բայց նա հետու էր այդ պաշտօնական գրականութիւնից, նա ունէր իր առանձին լեզուն, իր առանձին գրականութիւնը: Լեզուն աշխարհաբարն էր, իսկ գրականութիւնը երկնային գործերից չէր նիւթ առնում, այլ զուտ աշխարհային գործերից: Եկեղեցու գրականութիւնը հրեշտակներից ու սրբերից էր խօսում, ժողովրդինը՝ սէր, զինի, վարդ, լաց ու հառաչանք էր պարունակում: Նահապետ Քուչակը մեր ժողովրդական երգիչներից մէկն է և որ շատ հետաքրքրական է՝ բաւական հին երգիչներից: Ենթադրում են, որ նա ապրում էր տասնեկեցերորդ դարի սկզբում: Շատ թոյլ պատճառաբանում մի ենթադրութիւն է դա: Միակ փոքր ի շատ է գրական փաստը այն է, որ Նահապետի երգերից մէկը, ինչպէս վրկայում է մի վարդապետ, արտագրուած է եղել նոյն դարի վերջերում: Մեր հին գրողների և գործիչների ճակատագիրը այսպէս է: Եթէ մենք չը գիտենք հաստատ, թէ ով է եղել Եղիշէն, Եղնիկը, ինչ զարմանալի բան պիտի լինի, եթէ չ'իմանանք, թէ ով է եղել մի ժողովրդական աչուղ: Նահապետ Քուչակը մինչև այժմ շատ քիչ էր յայտնի իր երգերով: Այժմ պ. Չօպան-

նեան հրատարակում է նրա անունով յայտնի բոլոր երգերը և գրանով միջոց է տալիս, որ նա իր պատշաճաւոր տեղը բռնէ մեր հին երգիչներին շարքում:

Պ. Չօպանեանի հրատարակութիւնը մի հետաքրքրական դօկումենտ է մեր գրականութեան պատմութեան համար: Նահապետը երկնային ձայն ունեցող երգիչներից է, մի բոլորովին ինքնուրոյն դէմք: Միայն բանաստեղծական շնորհքը չէ Նահապետի երգերին առանձին հետաքրքրութիւն հաղորդում. լեզուն, երգերի չափը կատարեալ անակնկալութիւններ են մեզ համար:

Քուչակը բազմաթիւ սիրային երգեր ունի. խրատական և այլարանական երգերն էլ բաւական մեծ թիւ են կազմում, կան և ութ հատ պանդխտական երգեր: Սակայն երգեր ասելով՝ չը պէտք է մեծ-մեծ բաներ հասկանանք: Նահապետի երգերը մեծ մասամբ կազմուած են չորս տողերից և շատ հազազիւտ դէպքերում են հասնում ութ տողի: Դրանք՝ եթէ կարելի է այսպէս ասել, աւելի ասացուածքների են նման: Այդ փոքրիկ ոտանաւորների մէջ շատերը կան, որոնք գողտրիկ են ու գեղեցիկ: Չը մոռանանք, որ երգիչը ժողովրդի մարդ է, տալիս է պատկերներ, որոնք ներելի են ռամկական հասկացողութիւններին չըջանում. «եարի» ծծերը, ծոցը, դունչը—սրանք սովորական են այդ երգերի մէջ: Բայց կան և գեղեցիկ բանաստեղծական արտայայտութիւններ, որոնք պատիւ են բերում մեր ժողովրդական երգչի զգացմունքին և ճաշակին: Ահա դրանցից մէկը.

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,
 Հօպա իմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափառեցաւ,
 Եկաւ ի դուրսս ելաւ, և յըղեղս ելաւ թառեցաւ,
 Աշիցս արտասունք ուզեց նա, արիւն ի վար վաթեցաւ:

Կամ թէ՛

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, զօրն ըզքո տուն մտնուի,
 Ան բարձր մօտան շարտախդ՝ ես ի հօն բուն մը շինէի,
 Ոնց որ մութն մթանայր, ցածնայի ծոցը մտնուի,
 Ուց որ լոյսն լուսանայր, բարձրնայի բունս մտնուի.
 Ես ապրչմէ խուշախ, զօրն զքո միջաց գերկ ածէի,
 Կամ քաղցըր նըռան գիւնի, զօրն ըզքո փարշը պիտէի.
 Առնիր ու բերնիդ դընիր, ցածնայի դունչըդ պագնէի:

Թողնենք սէրը, որ երգւում է աշխարհի սկզբից անթիւ ու անհամար վարիացիաներով: Աւելի հետաքրքրական են հասարակական տեսակէտից խրատական բանաստեղծութիւնները, որոնց մէջ ժողովրդի աշխարհայեցողութիւններն են երևում: Այն իս-

ւար, դժբաղդ, արիւնոտ դարերում ինչ հաւատ ու դաւանութիւններ ունէր հայ ժողովուրդը: Մեր պաշտօնական գրականութիւնը շատ քիչ նիւթ է տալիս, նրա մէջ չը կայ ժողովուրդ: Մնում է, որ ժողովրդական Նահապետները պատմեն մեզ: Այս տեսակէտից էլ շատ ուսանելի են Քուչակի երգերը: Մենք տեսնում ենք նրա մէջ ստրուկ ժողովրդի փիլիսոփայութեան նրմուչներ: Ահա նա ասում է.

Գուցե՞ս որ յազիզ կենաս որ ամէն մարդ գրեզ սիրէ,
Դուն հողուն նման կեցիր որ ամեն մարդ ըզրեզ կոխէ:

Բայց միևնոյն ժամանակ այդ ժողովրդի մէջ կայ իր դեղեցկութեամբ և իմաստով յուզիչ այսպիսի միտք էլ.

Կանթեղիկ մտիկ արա, ջուրն ու ձէթն ու հուրն ի լման.
Կանթեղն է մտաց նման, ջուրն ուսման, ձէթն՝ դիտութեան,
Քանի զմիտքդ սուրբ ունիս, դու սիրով ջանա ուսման.
Նողիդ է պայծառ գունով, որ լոյս տայ քեզ մթութեան:

Սրտառուչ են և՛ դարիբական երգերը. սրանք էլ ժողովրդական զգացմունք են. մի ժողովուրդ, որ դարերով հալուել ու մաշուել է դարիբութեան ձեռքին, ի հարկէ՝ պիտի իմանայ և այն ողբալը: Հայ ժողովուրդը լաւ գիտէ արտայայտել իր այդ ցաւը, որ կրում է սրտի մէջ դարերից ի վեր, բայց որի հետ հաշտուել դեռ չէ կարողացել:

Նահապետ Քուչակի երգերը մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում և լեզուագիտական տեսակէտից: Մեր ժողովրդական երգիչներից շատ քչերին է աջողուել այնպիսի համեմատաբար մաքուր աշխարհաբար գործածել, ինչպիսին ունի Նահապետը: Դա XVI-XVII դարերի աշխարհաբարն է, և մեր լեզուագէտ բանասէրները կարող են շատ հետաքրքրական նիւթեր գտնել նրա մէջ ուսումնասիրութիւնների համար: Մեզ անձամբ շատ ուսանելի թւաց այն, որ Նահապետի աշխարհաբարի մէջ խառնուած են այժմեան արևմտեան և արևելեան բարբառները. մենք մինչև անգամ հանդիպեցինք «ից»-ով վերջացող բացառական հոլով:

Երկու խօսք էլ սլ. Չօպանեանի քննական ուսումնասիրութեան մասին: Մենք միանգամայն համաձայն ենք պարոնի հետ, որ չը պէտք է ուռցնել, արհեստական կերպով մեծացնել մեր ազգը: Այո, ճիշտ է, հայ ազգը մեծ ազգերից չէ, նա չէ տուել հանճարներ, նա ճնշուած է եղել երկաթէ լծի տակ, և պահանջել նրանից աւելին, քան ինչ նա տուել է իր թշուառ պատմութեան ընթացքում, հազիւ թէ կարելի լինի: Այդպէս էլ պէտք է վերաբերուենք մեզ: Բայց մի կողմից խոստովանելով

մեր փոքրութիւնը, մեր համեստութիւնը, մեր ստրկական կացութեան դառնութիւնը, միւս կողմից պիտի այնքան քաջութիւն էլ ունենանք, որ խոստովանենք, թէ դարաւոր ստրկութիւնը շատ է թո՛ւնաւորել մեր արիւնը, շատ է այլանդակել մեր մարդկային կերպարանքը: Պ. Չօպանեանը չէ հաւանում այն հայերին, որոնք իրանց ազգի պակասութիւններն են դատարկատու: Նա ասում է. «Տարօրինակ տկարութիւն մ'ունինք մեր ցեղին թերութիւնները յօժարակամ խոչորցնելու, ընդհանրացնելու, մեր ազգը մարդկութեան մրուրը նկատելու, մէկ խօսքով՝ սովորական բան մըն է մեզի համար Հայ ըլլալնէս ամէնալը, և ատի բաց է ի բաց ըսելով՝ քաջութեան, անկեղծութեան, ճշմարտասիրութեան փայլուն ապացոյց մը տուած ըլլալ կը կարծենք»: Որ կան այդպիսի հայեր, — այդ շատ ճիշտ է. բայց ճիշտ է և այն, որ այդպիսիները հեռանում են իրանց ազգութիւնից, մոռանում, ուրանում են նրան: Բայց երբ պ. Չօպանեանն իր այդ ասածները հաստատելու համար անմիջապէս դիմում է օրինակի և յիշում է Բաֆֆին, այդտեղ մենք ասում ենք. «Ոչ, մենք համաձայն չենք»: Բաֆֆին, Նաղարեանցը, Նալբանդեանցը, Ստեփան Ոսկանը, Սրժրունին խօսել են մեր ազգային արատների մասին, բայց խօսել են իբրև բարեկամ, ցաւակից, իբրև իրանց ազգի բարոյական զօրութեան ջերմապէս հաւատացող: Նրանք միշտ կարողացել են հասկանալ, որ հայ ժողովուրդը ունի իր մէջ շատ դրական յատկութիւններ, որոնց պէտք է զարգացնել, առաջ քաշել. նրանք հաւատում էին մեր վերածընդութեան:

Պ. Չօպանեանն իբրև օրինակ յիշատակում է այս, որ Բաֆֆին «կրցած է «բողի» մը նմանցնել հայ ժողովուրդը»: Բայց դա շատ անաջող օրինակ է: Բաֆֆի «Դաւիթ-բէկի» մէջ հերոսներից մէկը նմանեցնում է հայ ազգի քաղաքական ճակատագիրը մի պոռնիկ կնոջ. «Հաղարաւոր տարիներ անցկացրեց նա երբեմն յոյնի, երբեմն պարսկի և երբեմն հողմայեցու զիրկն ընկնելով: Մինչև անգամ անապատի սև արաբը իր հաստ շըրթունքով շօշափեց նրա երեսը: Մինչև անգամ թուրանի տափակաքիթ, զեղնակաշի մօնդօյը դարերով պառկեց նրա հետ»: Բայց հերոսը իսկոյն էի աւելացնում է. «Այնուամենայնիւ ես դարձեալ սիրում եմ այդ թեթևամիտ, վաւաչոտ կնոջը, որ դարերի ընթացքում իր անբարոյական կեանքով մաշուել, տրորուել, քրքրուել է և միայն իր վաղեմի զեղեցկութեան կմախքն է պահպանել: Սիրում եմ այդ կմախքը: Սիրում եմ այդ թունաւորուած, հաղարաւոր հիւանդութիւններով վարակուած մարմինը»: Եւ յետոյ բացատրում է, որ այդ սէրը չափազանց բա-

րի ցանկութիւններից է բղխում, այդ սէրը կամենում է հանել պոսնիկին ցեխերից և նրան օրինաւոր, պատուաւոր կեանքի սովորեցնել: Բանաստեղծական ձևով արտայայտուած այս հայրենասիրութիւնը միթէ նշանակում է «մեր ազգը մարդկութեան մրուրը նկատել»: Երբէք:

Պ. Չօպանեանը հիացած է Նահապետ Քուչակի երգերի վրայ և չափազանցութիւնների է դիմում: Այն, գեղեցիկ կտորներ կան այդ երգերի մէջ, Քուչակը այսուհետև նոյնպէս սիրելի կը լինի մեզ համար, ինչպէս Սայաթ-Նովան, բայց մենք հետու ենք Սայաթ-Նովայով էլ, Նահապետ Քուչակով էլ այդ աստիճան յափշտակուելուց: Նրանք պարծանք դառնալու չափ խոշոր չեն: Ուրիշ բան է, եթէ մեր անցեալից մնացած լինի վրաց «Լինձեռաւորի» նման մի բան: Չը մոռանանք, որ քրդերն անզամ ունեն «Սարէ-Սիփանէ»ի պէս մի բանաստեղծական գոհար...

Լ.

Հ. Ս. Երեմեան. «ՏՈՒՐԿԻՆ», ազգովէպ. պատկերազարդ, 82 էր. գ. 2,50 ֆրանկ (1 բուրի). Վենետիկ, 1903 թ.:

«Տուրկինի» հեղինակը իր մանրավէպի նիւթը վերցրել է հայոց պատմութեան հին շրջանից:

Երուանդ Բ. թագաւորի պալատականների մէջ կար մի քսու մարդ Տուր անունով: Նա Երուանդի սիրելին էր և ամենամտերիմը ամբողջ արքունիքում, բայց նրա բոլոր գաղտնիքները հաղորդում էր Արտաշէսի խորհրդատու Սմբատ սպարապետին: Երուանդը իմանում է այդ և սպանում է Տուրին: Տուրի կինը, Տուրկինը, վճռում է հանել իր ամուսնու վրէժը: Նա ծպտեալ կերպարանքով հեռանում է իր զղեակից և իմանալով որ իր ամուսնու մահուան պատճառը եղել է Բագարանի դանձապետ քուրմը, հրապարակաւ սուրը միտում է նրա կուրծքը այն ժամանակ, երբ թագաւորը և ժողովուրդը հանդիսաւոր թափօրով Բագարանի կուռքերը փոխադրում են Արտաշատ:

Մանրավէպը գրուած է կեղծ կլասիկական ոճով, սակայն անդ-տեղ հեղինակը տալիս է ընթերցողին կենդանի պատկերներ մեր հին անցեալից, օրինակ՝ տկալաստով (տկերի վրայ սարքած լաստով) նաւարկութիւնը Արաքսի վրայով, աղքատների խումբը Բագարանի տաճարի առաջ, վհուկի գուշակութիւնը Տուրկինի համար:

Չի տեսակէտից վէպիկի թոյլ կողմը խօսակցութիւններն են, բոլորն էլ անբնական, վերց-ուսոյց կամ քաղցր-մեղցր, բա-